ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«05 » մայիսի 2021թ. *N 50*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում սույն թվականի փետրվար ամսին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մարզպետարանի կողմից իրականացված Արմավիրի մարզի Այգեվան համայնքի համայնքապետարանում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

0931 Այգեվան համայնք 5փ. 8շ., Հեռ. 093371396, Էլ.փոստ՝ aygevan.armavir@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«05» մայիսի 2021թ. N 10

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 37-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 21.04.2021 թվականի 02/6.2/02498-2021 գրությանը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքում իրականացված իրավական հսկողության ամփոփման ընթացքում կազմված արձանագրության արդյունքները քննարկել և ընդունել ի գիտություն:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հ.Հովհաննիսյանին, համաձայն արձանագրության, հայտնաբերված խախտումները վերացնել և յուրաքանչյուր խախտման և թերությունների մասով ընդունել առանձին որոշումներ, դրանց վերացման նպատակով ձեռնարկել համապատասխան աշխատանքներ՝ հետագայում նմանատիպ խախտումները բացառելու համար, համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	կողմ (4)	դեմ (0)	ձեռնապահ ( )
1. Մովսիսյան Արտյոմ			
2.Նիկոլյան Արսեն			
3.Մկրտչյան Գայանե			
4. Ծատության Ռաֆիկ			
5.Քոչարյան Անահիտ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«05» մայիսի 2021 թ.

Այգեվան համայնք

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեվան
համայնքի ավագանու 2021թ.
մայիսի 5-ի թիվ 3 արտահերթ
նիստի N10 որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Այսուհետ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ կներառվեն տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով:

2. Ընդունել որոշում՝ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով բյուջեի կատարման, բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության, բյուջետային միջոցների ծախսման, բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ:

3. Ընդունել որոշում՝ համայնքի բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով իրականացնելու վերաբերյալ:

4. Համայնքի բյուջեով տեղական վճար սահմանելու մասին կազմել է համապատասխան նախագիծ և ուղարկել ՀՀ Արդարադատության Նախարարություն՝ փորձաքննության: Եզրակացությունը ստանալուց հետո՝ կնդունվի համապատասխան որոշում և խմելաջրից հավաքագրված գումարները կուղղվեն ծախսերը հոգալուն:

5. Ընդունել որոշում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառում իրականացնելու ու գրանցամատյաններ վարելու կարգի վերաբերյալ:

6. Իրավասու մարմինների հետ քննարկվել է համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության, հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու հարցը:

7. Ընդունել որոշում՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին:

8. Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձում այսուհետ կներառվեն տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին :

9. Պարտավորվում ենք օրենքով սահմանված կարգով ապահովել համայնքի բյուջեի սեփական եկամուտների՝ այդ թվում տեղական հարկերի, տուրքերի և վճարների,

համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների կատարումը:

10. Պարտավորվում ենք հողի հարկի և համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարների պարտավորությունները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ:

11. Պարտավորվում ենք խախտումները համապատասխանեցնել ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

12,Հ,աշմանդամների համար ապահովվել սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: